

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Մերիա	[3] Համար
21	Հոկտեմբեր	2021 թ.		Բ	5159816736
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
21	Հոկտեմբեր	2021 թ.		Մերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կերման ամսաթիվ	[6] Համար	
			27 Հունվար, 2021 թ.	ՀԳԴ-5-21	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀՆՄ կարոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ԳԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570015111280200					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	Յրդ միկ շքթ. 23 18							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին նախ.աշխ.գործ.վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (քնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№ Շ/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (տվյալանյութությունը)	Հավի միավորը	Շտրկանով ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Ձեռք(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-պարսկերեն գրավոր թարգմանություն	էջ	15	2200		33000
2	Հայերեն-պարսկերեն գրավոր թարգմանություն	էջ	68	2200		149600
3	Հայերեն-վրացերեն բանավոր թարգմանություն	ժամ	3	6000		18000
4	Հայերեն-պարսկերեն գրավոր թարգմանություն	էջ	8	2200		17600
Շեղանակ						218200

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)
STEPANYAN HMAYAK 2301850293
 (ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող
GRIGORYAN SUSANNA 7403690397
 (ստորագրությունը, անունը, ազգանունը)

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

Ց-ը սեպտեմբերի 2021թ.

ք.Երևան

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Ա. Երիցյանս, ուսումնասիրելով թիվ 13189321 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Ի՞նչ քաղաքացի Հեյդար Հասանալի Դուստինին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ): Քրեական գործի նախաքննությունն ավարտվել է և այն հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հեյդար Հասանալի Դուստինը չի տիրապետում հայերերն գրավոր և բանավոր լեզվին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և սյաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ինչպես նաև այն, որ հայերեն փաստաթուղթն անհրաժեշտ է թարգմանել պարսկերեն, իսկ Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործարույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 13189321 քրեական գործով մեղադրական եզրակացության և այն հաստատելու մասին որոշման պարսկերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (անձնագիր AN0780981) և նրան ձևորոշակել ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների
և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի
1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ
թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն
աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ
կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝
առավելագույնը երկու տարի ժամկետով:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական
շրջանների դատախազության դատախազ,
երրորդ դասի խորհրդական



Ա.Երիցյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և
ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և
պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ
հոդվածով նախատեսված պարասխանադրության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
Հրանուշ Թախմասյան



«8» 09. 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

13 սեպտեմբերի, 2021թ.

ք. Երևան

«Վաղարշապատի դատախազության «Վազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Գ. Հովակիմյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 58224721 քրեական գործն ըստ մեղադրանքի Սաիդ Հասանի Սալմանիադդամի՝ «Քրեական օրենսգրքի 267.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 38-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Արմինե Վարշամի Մակարյանի՝ «Քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 35-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, Հարություն Հակոբի Դանոյանի՝ «Քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 35-267.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, և Ռաֆայել Տիգրանի Ղազարյանի՝ «Քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով,

ՊԱՐԶԵՑԻ՝

«ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննված թիվ 58224721 քրեական գործն ըստ մեղադրանքի Սաիդ Հասանի Սալմանիադդամի՝ «Քրեական օրենսգրքի 267.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 38-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Արմինե Վարշամի Մակարյանի՝ «Քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 35-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, Հարություն Հակոբի Դանոյանի՝ «Քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 35-267.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով, և Ռաֆայել Տիգրանի Ղազարյանի՝ «Քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 2021 թվականի սեպտեմբերի 10-ին կազմված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է «Վաղարշապատի դատախազության «Վազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն:

«Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

«Քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Սաիդ Հասանի Սալմանիադդամին չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն լեզվին և իր հաշվին

թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը և այն հաստատելու մասին որոշումը մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից պարսկերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտչի Թախմասյանին:

Հրանուշ Թախմասյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Սաիդ Հասանի Սալմանիադդամիի և մյուսների վերաբերյալ ՀՀ ԱԱԾ քննչկան դեպարտամենտում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 58224721 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտչի Թախմասյանին (անձնագիր AN 0780981, տրված՝ 22.12.2013թ. 029-ի կողմից):

Հրանուշ Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

Հրանուշ Թախմասյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդակա

Գ. Հովակիմյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ

Հրանուշ Թախմասյան

« 13 » 09 2021թ.

Ո Ր Ո Շ Ու Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

24 սեպտեմբերի, 2021 թ.

ք.Իջևան

Տավուշի մարզի դատախազության դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝ Վ. Ժ. Գրիգորյանս, ուսումնասիրելով Ռևազ Լոմաձեի հանձնման միջնորդությունը և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայտնում եմ, որ 2021 թվականի սեպտեմբերի 20-ին՝ ժամը 18.55-ին, ՀՀ ԱԱԾ Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ՀՀ ոստիկանության ՏՄ վարչության Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժանմունք է բերման ենթարկվել վրաստանի Հանրապետության քաղաքացի Ռևազ Իսիդորովի Լոմաձեն, ծնված՝ 1989 թվականի դեկտեմբերի 18-ին, հաշվառված է ք. Քոբուլետի Դավիդ Աղմաշենեբեյի փողոց 88Ա հասցեում, ով 2020 թվականի հունիսի 19-ից որպես դատապարտյալ հեղափոխվում է Հունաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից՝ Հունաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 26, 27, 42, 45, 98, 372, 374-րդ հոդվածների հարկանիշներով, խափանման միջոցը՝ կալանավորում:

2021 թվականի սեպտեմբերի 20-ին՝ ժամը 21:20-ին, Ռևազ Լոմաձեն ձերբակալվել է և տեղափոխվել ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ՁՊՎ:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, Ռևազ Լոմաձեն ազգությամբ վրացի է, չի տիրապետում հայերեն լեզվին, իսկ Նաոա Ֆարմանյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ռևազ Լոմաձեի հանձնման միջնորդության և կից փաստաթղթերի վրացերեն թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Նաոա Ֆարմանյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AN 0619509, որակավորումը հաստատվող փաստաթուղթ՝ 20.05.2000թ. ՀՀ արդարադատության նախարարի տեղեկանք) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներին և պարտականություններին:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պարժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը

երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:


Տավուշի մարզի դատախազության դատախազ,
արդարադատության երկրորդ դասի խորհրդական



Հ. Հ. Գրիգորյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասխանարկության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Նաոա Ֆարմանյան

« 24 » 09:.....2021 թ.

1-ը հոկտեմբերի 2021թ.

ք.երևան

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Մ.Հակոբյանս, ուսումնասիրելով Սասան Լոտֆոլլահի Արդեստանիսամանիի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84102621 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2021 թվականի սեպտեմբերի 29-ին ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում մեղադրական եզրակացությամբ ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված թիվ 84102621 քրեական գործն ըստ մեղադրանքի Սասան Լոտֆոլլահի Արդեստանիսամանիի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 268-րդ հոդվածի 1-ին մասով:

2021 թվականի հոկտեմբերի 1-ին որոշում է կայացվել թիվ 84102621 քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրյալ Սասան Լոտֆոլլահի Արդեստանիսամանիին հայերենին չի տիրապետում, այլ տիրապետում է պարսկերենին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը՝ կից հավելվածներով, և այն հաստատելու մասին որոշումը հայերենից պարսկերեն թարգմանելու ու մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Ակրտիչի Թախմասյանին (անձնագիր՝ AN 0780981, տրված՝ 22.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ PB № 013781՝ տրված ԵՊՀ-ի պետական քննական հանձնաժողովի 1990 թվականի հունիսի 22-ի որոշմամբ):

Հրանուշ Թախմասյանն ունի համապատասխան մասնագիտական կրթություն, այն է՝ արևելյան լեզուներ և գրականություն (պարսկերեն), ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Սասան Լուսինյանի Արդեստանխամանի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84102621 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Վի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (անձնագիր՝ AN 0780981, տրված՝ 22.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ PB № 013781՝ տրված ԵՊՀ-ի պետական քննական հանձնաժողովի 1990 թվականի հունիսի 22-ի որոշմամբ):

2. Հրանուշ Թախմասյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

3. Հրանուշ Թախմասյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական՝



Մ. Կալոբյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Հրանուշ Թախմասյան

« 01 » հոկտեմբեր 2021թ.